
ԵՆՔԱԿԱՅԻ ԵՎ ԱՏՈՐՈՂՅԱԼԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

ԷԳ. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ

Ենթակայի և ստորոգյալի շարադասությունը հայ քերականագիտության մեջ հանգամանորեն ուսումնասիրված թեմա է: Ընդ որում, արդի հայերենում ավելի բազմակողմանիորեն է ուսումնասիրվել, քան գրաբարում: Դա բացատրվում է ժամանակի քերականական մտքի ուղղվածությամբ ու մակարդակով, գուցե նաև հնարավորություններով:

Գրաբարի շարադասությունը նորովի մոտեցումներով ուսումնասիրել է նաև Սերգո Հայրապետյանը¹: Կարծում ենք՝ ենթակայի և ստորոգյալի ուսումնասիրությունը կարելի է լրացնել նոր իրողությունների բացահայտումով, որն էլ սույն ուսումնասիրության բուն նպատակներից է:

Այժմ գլխավոր անդամների շարադասության առանձնահատկություններն ու մանրամասները ցույց տալու համար դիմենք փաստերի՝ առաջնորդվելով հետևյալ սկզբունքներով:

1. Ենթակայի և ստորոգյալի շարադասության քերականական սկզբունք:

Այս սկզբունքը ներառում է ենթակայի և ստորոգյալի փոխդասավորությունը կամ դիրքափոխությունը՝ կապված ձևաբանական և շարահյուսական մի շարք երևույթների հետ. այսպես՝ ենթակայի խոսքիմասային և հոլովական արտահայտությունը, ստորոգյալի կազմությունը և արտահայտությունը, տարբեր կառուցվածք ու կազմություն ունեցող նախադասություններում ենթակայի և ստորոգյալի քերականական առանձնահատուկ դրսևորումները, դերբայական կառույցներում (դարձված, դարձված-նախադասություն) նրանց շարահյուսական կիրառությունները և այլն:

Քերականական սկզբունքը ենթադրում է ***ձևաբանական*** և ***շարահյուսական*** գործոններ:

Ա. Ձևաբանական գործոններ:

Փոխադարձ կապի պայմաններում ձևաբանական իրողությունները պատճառում են շարահյուսականների փոփոխություն, իհարկե, լինում է նաև հակառակը: Ինչպես դա գործում է ենթակայի ու ստորոգյալի համաձայնության, զեղչման դեպքերում, այնպես էլ հանդիպում է շարադասության հարցում:

¹ Տե՛ս **Ս. Հայրապետյան**, Ենթակայի, ստորոգյալի և ուղիղ խնդրի շարադասությունը գրաբարում, «Հայոց լեզվի պատմության հարցեր», թիվ 2, Եր., 1985, էջ 59 – 170, **նույնի՝** Գրաբարի շարադասությունը (V դար), Եր., 2005:

1. Ենթակայի խոսքիմասային արտահայտությունը²:

Արտահայտվելով տարբեր խոսքի մասերով՝ ենթական կարող է հանդես գալ շարադասական տարբեր դիրքերում (նախադաս կամ հետադաս), այսինքն՝ ունենալ ազատ շարադասություն: Բայց ենթական երբեմն տեղաշարժի լրացուցիչ հնարավորություններով կարող է նաև կայուն դիրք գրավել:

Այդպիսին է *անձնական, ցուցական, անորոշ, որոշյալ, հարաբերական, հարցական դերանուններով արտահայտված ենթական*, որը առավելապես նախադաս գործածություն ունի: Բերենք օրինակներ:

Անձնական դերանուններով՝ Իսկ նա զանձն կարի ի խոնարհութեան ունէր (Բուգ., 150): Եւ ինքն չոգաւ եմուտ ի ծով մեծ (Բուգ., 338): Դու բնաւ ընդէ՞ր նայեցար տեսանել զերեսս նորա (անդ): Մեք զՅունացն միայն յիշեցար զպատմագիրս (ՀՀ, 7 /1/, 543): Ես հաւատացի ի նա եւ ի հայր նորա (անդ, 542):

Ցուցականներով, որոնց վերացական իմաստները որոշակիացվում են նախորդ խոսքից հայտնի իրողությանը տարածական իմաստով մոտիկ լինելու հանգամանքով: Օրինակ՝ Մա կեցեալ ամս երկերիւր եւ երեսուն ծնանի զՍեթ (ՀՀ, 7 /3/, 351): Մոքա չոգան դեսպանութեամբ ի սէր միաբանութեան առ կայսրն Վաղէս (ՀՀ, III /3/, 371): Նոյն տացէ՛նցա զմարտին յաղթութիւն (Ազաթ., 168)*:

Անորոշ դերանուններով. ոմն, որ դերանունները հանդես են գալիս նաև հարադրված ձևերով՝ *միւս ոմն, այլ որ, ո որ, այլ մի որ, մի ոմն* ևն: Օրինակ՝ Ըմբռնեսցի, եթէ որ զադոտ ելանելով դաւել կամիցի զարքայն (Խոր., 194): Ոմն նախ քան զմեզ իմաստասիրեաց (ՀՀ, 7 /3/, 152): Միւս ոմն ասէ յԱստուծոյ (Ազաթ., 287)*: Այլ որ ոչ էր մնացեալ յազգէն (ՀՀ, III /1/, 51): Յորոց մի ոմն ի նոցանէ ասէր այսպէս (ՀՀ, 7 /3/, 156): Այլ մի որ ինքնակաց զաշխարհս իշխեսցէ համարել (ՀՀ, 1, էջ 24): Ամենայն որ ո որ առ ոմեք էին (ՀՀ, III /3/, 178):

Որոշյալ դերանուններով, որոնք գործածվում են և՛ առանձին, և՛ հարադրյալ ձևերով: Օրինակ՝ *Ամենքեան* բերանաբաց *հառաչէին* զկնի նորա (ՀՀ, III /1/, 37): *Ամենքեան դուք կեցեալ էք* յազգէդ արշակունոյ (անդ): Եւ այլքն ամենքեան զիրաբանչիւր վրէժս պահանջեն (ՀՀ, 1, էջ 13):

Հարաբերական դերանվամբ, որի առաջադաս դիրքը չափազանց կայուն է. ձգտում է մոտ լինել գլխավոր նախադասության հարաբերվող բառին և, կայուն դիրք գրավելով երկրորդական նախադասության սկզբում, կապ է ստեղծում նախադասությունների միջև: Օրինակ՝ Գոհանար զտեսանէ՛ որ այնչափ վերակացու եւ այցելու եղև հաւատացելոց իւրոց (Բուգ., 170): Իսկ զկնի ասպա նշանակեսցուք եւ զժամանակս զալստեան *հարցն* նոցա ի Հայս, որք են Կարենեանք եւ Մուրենեանք (Խոր., 168): Հարաբերական դերանվան նշված արժեքով կարող է հանդես գալ նաև *n(n^o)* դերանունը. Պահեսցէ զմեզ Զրիստոս Աստուած, եւ զամենեսեան՝ որք երկրպագեն նմա ճշմարտութեամբ (ՀՀ, 7 /3/, 148):

² Հմնտ. մեր «Ուղղական հոլովով ենթակայի խոսքիմասային արտահայտությունը գրաբարում» հոդվածը, Հայկ. պետ. մանկ. ինստ. «Գիտական աշխատություններ», հայոց լեզվի բաժին, Եր., 1967, № 2:

* Աստղանիշով օրինակները Ս. Հայրապետյանին են:

Հարցական դերանուններով. սրանք գործածվում են և՛ առանձին, և՛ անորոշ դերանունների հարադրությամբ (*ո՞վ որ, ո՞ որ, ո՞ ոմն*), իհարկե, մեծ մասամբ ապահովելով հարցական երանգը: Օրինակ՝ *Ո՞վ* այսուհետև զմերս *յարգեսցե* զուսումն, *ո՞վ ուրախացի* ընդ յառաջադիմութիւն աշակերտիս. *ո՞վ* զհայրենականն *բարբառեսցի* զուարճութիւն (*ՀՀ, 7 /3/, 181*): *Ո՞վ որ* տուն կամ օթանոց մեզ *պատրաստեսց* (անդ): *Ոյք* արդեօք եւ որպիսի արք *տիրեալ իցեն* ի վերայ աշխարհիս Հայոց (անդ): *Ոյք* արդեօք եւ որպիսի արք *տիրեալ իցեն* ի վերայ աշխարհիս Հայոց (անդ, 148): *Ո՞ ծնաւ* զիթս անձրեւի (*ՀՀ, 1, էջ 651*): Ձեղեամն յերկինս *ո՞ ծնաւ* (անդ): *Ո որ* յերկուց որդուցն իմոց յառաջ առ իս *հասցե* (անդ): *Ոյր ոմանք* յառաջ քան զիս *իցեն տիրեալ* աշխարհիս Հայոց (*ՀՀ, 7 /3/, 157*):

Ժխտական կառույցներում դերանունների առաջադաս քերականական դիրքը պահպանվում է, միայն ժխտական մասնիկները կարող են դերանուններից առաջ դրվել՝ վերաբերելով բայ-ստորոգյալին: Օրինակ՝ *Մի որ ըմբռնեսցե* զմարմին նորա (*ՀՀ, III /1/, 572*): *Մի որ երթիցե* ի նոցանէ ընդ զօրս արքունի (անդ, 460): Եւ *ոչ որ ապրեսց* ի նոցանէն (*ՀՀ, 7 /3/, 178*): *Ոչ որ ընդդիմանայ* նմա հօրապէս (անդ): *Մի որ իշխեսցե* յոյն խօսել կամ թարգմանել (*ՀՀ, 7 /2/, 413*): Եւ *ոչ այլ որ արարիչ էր* չարեսց (*ՀՀ, 1, էջ 723*):

Դերանվան այս տեսակները այլևայլ պատճառներով կարող են դիրքավորվել՝ հետադասվել: Նրանցով արտահայտված ենթական տեղաշարժվում է դեպի հետ՝ մի դեպքում դերանվան վերացական իմաստի մեղմացման և առարկայացման իմաստին մերձենալու, մյուս դեպքում՝ գործողության ընդգծման պատճառով, որի հետևանքը լինում է այն, որ ստորոգյալը, ունենալով «գործողության ընդգծմանը ծառայող դիրք» (ՍՀ, 113), առաջադասվում է, այսպես ասած՝ շրջուն շարահաստության է ենթարկվում: Օրինակ՝ Յիրաւի *արժանի եղև սա* արոռոյն հայրապետաց (*ՀՀ, III /3/, 370*): *Էին լեալ տքա* ազգաւ Հոռոմ (անդ, 371): Վասն որոյ *առաքեցայ ես* (*ՀՀ, 7 /1/, 542*): Արդ՝ *ջանասցիս դու* թովելով զօրէն համոզակեր թովչի (անդ): Եւ *մեռանի ինքն* եւ իւրքն ամենայն (անդ, 792): Բայց *Էին* ի նոցա *ոմանք* (*ՀՀ, III /3/, 178*): Ի ժամ առաւօտուն *ասէին ամենեքեան* (*ՀՀ, 5 /1/, 30*): Անդ *անկցին ամենեքեան* (անդ) և այլն:

Բուզանդի «Հայոց պատմության» մեջ *սա* դերանունը եզակի ուղղակիանով գործածված է 64 անգամ, 38-ը՝ նախադաս, 26-ը՝ հետադաս, ըստ որում՝ հետադաս կիրառությունների մեծ մասը «էր սա...» տիպի կառույցում՝ 15 անգամ: Ուրեմն հաստատվում է այն կարծիքը, թե «Որքան բարձր է ենթակայի դերանվանական կիրառության հաճախականությունը լեզվում, այնքան ակներև է առաջադաս դիրքում ենթակայի գերակշռությունը» (ՍՀ, 99):

2. Ենթակայի հոլովական արտահայտությունը³:

Ենթական, բացի ուղղականից, գրաբարում գործածվում է նաև սեռական, տրական և հայցական հոլովներով: Տարբեր հոլովներով արտահայտվող ենթական ձևավորվում է տարբեր կառույցներում, որոնք ստորոգյալի արտահայտության բնույթով երեք տեսակ են՝ դերբայական, դիմավոր բայով

³ Այս թեման բազմակողմանիորեն քննված է մեր ուսումնասիրություններում, այստեղ վերհիշում ենք որոշ կառույցներ՝ ելնելով հարցի քննության պահանջներից:

և խառն (դերբայական և դիմավոր ձևերով): Այս երեք տեսակի կառույցներում ստորոգումային հիմք ներկայացնող միավորները մոտենում են կայուն դիրքափոխությանը: Տարբեր կառույցներում գործում են SP (S - ենթակա, P – ստորոգյալ) և PS կարգերը: Հնարավոր է, որ տարբեր կառույցներում այդ կարգերից մեկը գերազանցի մյուսին, իսկ դա իրագործվում է քերականական որևէ գործոնով և ոչ պատահականորեն:

ա) *Սեռական հոլովով ենթական* հանդես է գալիս՝ 1) անցյալ դերբայի, 2) անցյալ դերբայով բաղադրյալ ժամանակաձևի (միայն եզակի III դեմքով) և 3) անորոշ դերբայի հետ, այսինքն՝ երեք տեսակի կառույցներում, որոնցից առանձնաձևում է նաև չորրորդ (դերբայական և դիմավոր ձևերով) կառույցը:

Այս կառույցներում ենթակա-ստորոգյալ շարադասությունը տարբեր է: I կառույցում գործում են SP և PS կարգերը, ըստ երևույթին՝ PS-ի առավելությամբ, II կառույցում՝ հավասարապես SP և PS կարգերը, III կառույցում՝ կայուն PS կարգը, IV-ը առանձնահատուկ է. անցյալ դերբայի հետ կապված գործում են SP և PS կարգերը, դիմավոր բայ-ստորոգյալի հետ կապված՝ միայն SP կարգը:

Օրինակներ՝ ըստ տարբեր կառույցների:

1) Դերբայական նախադասություններում դերբայ-ստորոգյալները նախադաս են, առաջնային դիրքում՝ հավանաբար բայական մի քանի հատկանիշներից (դեմք, թիվ, եղանակ, ժամանակ) գուրկ լինելու, հետևապես գործողության իմաստն ընդգծելու, ցուցադրելու պատճառներով (հմմտ. ՍՀ, 100-101):

Եւ *հրամայեալ Արտաշիսի* բնակեցուցանել զնոսա ի հարաւոյ յարեւելից կուտ Մասեաց (Խոր., 218): Եւ զայս օճան *ընկալեալ* ի Տեառնէ երանելի *առաքելոցն*, զամենայն գործակցաց իւրեանց գրով նշանակել զքաջութիւնս (Կոր., 6): Այսպիսի կառույցներում PS-ին հակադրվում է SP կարգը. ենթական դիրքափոխվում է, ինչպես՝ Իսկ երանելոյն *Սահակայ* զեկեղեցական գրոց գումարութիւնն՝ կանխաւ յունական բարբառոյն ի հայերէն *դարձուցեալ*, եւ բագում եւս ի հայրապետաց սրբոց զճշմարիտ զիմաստութիւնն (Կոր., 31):

2) Ենթական հետադաս է՝ *Լուեալ* իսկ *էր իմ* ի նախնեաց մերոց (Եդ., 120): *Ասացեալ է ուրումն* ցարքայ (ՂՓ, 32): Չորս *առեալ էր* նենգատր *իշխանին* Սիւնեաց Վասակայ ի դայեկայ (ՂՓ, 258):

Ենթական առաջադաս է՝ Չաբարարակ *իմ զենեալ է*, եւ ճաշ *իմ պատրաստեալ է* (Ագաթ., 56): Չի այժմիկ *ձեր* ծառայից զմեր տերանց ձերոց զբարձ *կալեալ է* (Բուգ., 258): Իւր զնա այնպէս *ստեղծեալ էր* յորովայնէ (Եզն., 138): Անհնարին է ասել, եթէ *հիւղայն լեալ իցէ* (Եզն., 28):

SP և PS կարգերը գլխավոր անդամների փոխդասավորությամբ այնքան համազոր են, որ միևնույն նախադասությունը նույն հեղինակի մոտ գործածվում է երկու տարբերակներով. այսպես՝ Արդ եթէ *Աստուծոյ* զնա չար *արարեալ է*, ընդէ՞ր հալածէ եկեղեցի զդեւս (Եզն., 120): *Ոչ* ի չարչարել եւ ի փորձել *արարեալ է* զնա *Աստուծոյ* (Եզն., 148):

Ժխտական կառույցներում *չ, ոչ, չեւ* մասնիկները կայուն դիրք չունեն. կարող են ընդմիջարկվել բառերով ու կապակցություններով (*չ-ն* օժանդակ բային կից է դիրքափոխվում)՝ մասնակիորեն ազդելով ենթակայի և ստորոգյալի դիրքափոխության վրա (հմմտ. նաև վերջին օրինակը): Օրինակ՝

Չի որ ինչ *Մովսէսի չէ ասացեալ*, այլ մարգարէք լցին նովին Հոգւով (Եզն., 156): Չի (Չրուանն) արարիչ չէ, քանզի *չէ իւր արարեալ* (Եզն., 102): *Ոչ երբէք ասացեալ է նոցա* զքեզ գայդ (Ագաթ., 48): Իբրեւ *ոչ իցէ նորա տեսեալ* զիս (Խոր., 176): Մինչ չեւ *Աստուծոյ* զմարդն *արարեալ էր*, ուստի չարիքն լինին (Եզն., 30):

Գրական ձևերը ևս կարող են օժանդակ բայի այսպիսի կիրառություններ ունենալ: Ինչպես՝ Քանզի էր *Երուանդայ դարձուցեալ* ի նա զգահն երկրորդական, զոր *հանեալ էր* ի նոցանէ *Տիգրանայ* եւ *տուեալ (էր)* իւրում քեռառնն Սիհրդատայ (Խոր., 200):

3) Նախդրավոր անորոշ դերբայի ենթական հետադաս կայուն դիրք ունի. *ի* եւ *ընդ* նախդիրներով (+ անորոշ դերբայ) արտահայտված գործողության հետ կապ ունեցող ժամանակը առաջնային պլան է մղվում, և ենթական հետադասվում է՝ երբեմն ընդմիջարկվելով նախդրավոր անորոշից (Քից): Օրինակ՝ *Ի փախչել ձեր* կոտոյն Վրաց՝ մնացաք մեք ի կռուատեղն (ՂՓ, 342): *Յելանելն մեր* հանդէպ ամբոխին Բելայ՝ դիպել ջանասցուք տեղոյն (Խոր., 42): *Ի շողայ* բազում *սուսերացն*, եւ *ի ճոճել* բազմախումն *նիզակացն* իբրեւ հրաձգութիւն եռային (Եղ., 236): Ի գալն աստուածական հրամանով սրբոյն *Կոստանդիանոսի* ի վերայ անթիւ բազմութեանն Գթաց... (ՂՓ, 10): Նա եւ *ընդ լինելն* իսկ *աստանայի* յԱստուծոյ, զիտաց (Եզն., 40):

Անորոշ դերբայը կարող է հետադաս (չի բացառվում նաև՝ նախադաս) սեռական ենթակա ունենալ առանց *ի*, *ընդ* նախդիրների, ինչպես՝ Եւ իմացեալ իմ *զմերձ լինելն նորա* ի տուն իմ՝ փախեալ (Խոր., 42)⁴: Յետ այսորիկ *երթալով Արտաշիսի* ի ճաշ Արգամայ, կասկած իմն անկեալ... (Խոր., 214): Հունական ոճ է, երբ անորոշը գործիական հղվով է:

4) Այսպես կոչված խառն տիպի կառույցը գրաբարում շատ է տարածված, սեռական ենթական ունենում է անցյալ դերբայով և մեկ այլ՝ դիմավոր բայով ստորոգյալ: Ընդ որում, անց. դերբայի՝ իբրև ստորոգյալի, հարաբերությամբ ունենում ենք նախադաս և հետադաս կիրառություններ՝ SP և PS կարգեր, իսկ դիմավոր ստորոգյալի նկատմամբ՝ միայն առաջադաս դիրք՝ SP կարգ: Օրինակ՝ Չայս *տեսեալ քազատորին* Քուշանաց՝ *ոչ հանդրորժէր էլանել* ընդ առաջ նորա պատերազմաւ (Եղ., 36): Եւ *քազատորին* եւ աւագանոյն յօժարութեամբ *յանձն առեալ՝ հրամայեաց* (ՂՓ, 194): Ապա *եկեալ* եւ *առեալ Սևարոպայ* եւ մեծին *Մահակայ* զնոյն աշակերտս ... *առաքեն* ի Սիջագետս (Խոր., 424):

բ) *Տրական հորովով ենթական* հանդես է գալիս երկու տեսակ կառույցներում, որոնցում ենթակայի և ստորոգյալի փոխդասավորությունը տարբեր պատկեր ունի: Այսպես՝ 1) Դ-ա հայտնի *տրականն անորոշի հետ* կառույցն է, որտեղ բայի ձևը գործողության իմաստի սաստկացումով առաջ է մղվում՝ ապահովելով գերազանցապես շարադասական առաջնային դիրք: Օրինակ՝ Վասն որոյ ընդ այգանալ աշալրջացն *սովորութիւն ունել սպասատրացն* արքունի՝ վէմս որձաքարեայս պահել ընդդէմ Երուանդայ, եւ ի հայեցուածոցն

⁴ Մենք տարբերում ենք բուն և կողմնակի ենթակաները. սա ընտիր օրինակ է բուն և կողմնակի ենթակաները ցույց տալու համար. *նորա* կողմնակի է, *իմ* (իմացեալ իմ ... փախեալ)՝ բուն:

դժնութենէն ասեն *պայթել* որձաքար *վիմացն* (Խոր., 198): Չհետ երթայք սիրոյ. եւ *նախանձատր լինել ամենեցուն* հոգեւորացն (Կոր., 7):

Իսկ ժխտական կառույցում շեշտվելով՝ սաստկական իմաստ ունեցող բառի հարադրությամբ ենթական կարող է առաջադասվել: Օրինակ՝ Եւ մի՛ *մտնք* մի կին առանձինն *ունել*, այլ գոր արքն կամիցին եւ կանայք ախորժիցին, *այնց* ընդ այնս *լինել* (Եզն., 166): Եթէ նա կամեսցի՝ *ննա իսկ մտանել* ի ծառայութիւն (Եղ., 142):

2) Միադիմի բայով ու անորոշ դերբայի հարադրությամբ արտահայտված ստորոգյալը և տրական ենթական կիրառվում են ակտիվ դիրքավորությամբ. այն է՝ ա) ենթական հանդես է գալիս միադիմի բայից առաջ կամ հետո՝ միադիմի բայի և անորոշի միջև, բ) միադիմի բայը և անորոշը կարող են ընդմիջարկվել նաև այլևայլ բառերով, կապակցություններով, գ) միադիմի բայի օժանդակ բաղադրիչը (է/չէ/չիք) կարող է մյուս բաղադրիչից (պարտ, հնար, մարթ ևն) առաջ ընկնել, դիրքավորվել, մանավանդ եթե կառույցը ժխտական կամ հարցական բնույթի է: Օրինակ՝ ենթական առաջադաս է՝ *Որում օրէն էր* գյաշտ *առնել* (Եզն., 106): Արդարոյն *արարածոց պարտ է* օտարին բարոյ *պաշտօն մատուցանել* (Եզն., 158): Երկուց *անարարաց* ի միասին *չէ մարթ լինել* (Եզն., 20): *Մարդոյ ոչ է հնար փոխել* ի կերպարանս ինչ, յոր եւ կամիցի (Եզն., 84): Ենթական միադիմի բայի և անորոշի՝ ստորոգյալի բաղադրիչների միջև է՝ *Չի ոչ է մարթ հովուի բողոյ* յխաշն իւր, այլ *պարտ է հովուի դնել* զանձն ի վերայ ոչխարին իւրոյ (Բուգ., 266): Ապաքէն *պարտ էր մտնք* ի միջի *լինել* (Եզն., 104-106): *Չի ոչ է մարթ մտնք սկիզբն առնուլ* լինելոյ (Եզն., 106): *Պարտ է մեզ, ասէ*, յայսպիսում բարեխառնութեան օրոց եւ մաքրութեան ջուրց եւ երկրի, քաղաք եւ արքունիս *չինել* բնակութեան (Խոր., 62): Հարցական կառույցում՝ *Է՞ր արդեօք հնար աղջկան* միոջ մանկամարդոյ՝ *ունել* զդէմ առն սկայի...զիա՞րդ *էր հնար այդմ լինել* (Ազաթ., 136): Հազվադեպ ենթական հետադաս է՝ *Ի գոյր է* կալ կալն *ասել մտնք* ի կալս եւ ոչ ա՛ն ա՛ն (Եզն., 184): Արդ եթէ գագանք չարի արարածք էին, եւ երկիր բարոյ, *ծախել պարտ էր* գնոսա *երկրի* (Եզն., 52):

գ) *Հայցական հոլովով ենթական* թեք հոլովներով ենթակա ունեցող կառույցներում համեմատաբար քիչ է հանդիպում, սակայն որոշակի է նրա միջավայրը. ասացական բայի պահանջով գործածվող դերբայական կապակցություն է՝ դերբայական նախադասություն⁵, որտեղ անորոշ դերբայ-ստորոգյալն ունի հայցական ենթակա՝ SP և PS կարգերով: Օրինակ՝ *Չի ասէին զնա* այր ընտիր *լինել* (Խոր., 234): Եթէ զամենայն *զԱստուած* յամենայնի ի հիւղն *լինել* ասիցեն (Եզն., 20): Ի վերայ երեսաց երկրի խաղաղասէր ասեն *զոլ զազգն* ճենաց (Խոր., 270): Բայց ասի, ի ժամանակս Արտաշիսի *ոչ գտանել երկիր* անգործ յաշխարհիս *Հայոց* (Խոր., 224):

3. Ենթակայի, ստորոգյալի և ուղիղ խնդրի փոխդասավորության գործառնություններում ձևաբանական կարևոր գործոն է *բայի անցողականության կարգը*: Երեք անդամների միջև կապ ստեղծվում է անցողական բայերի քերականական հատկանշով. մեկից մյուսին անցում ներգործությամբ: Թեև

⁵ Հմմտ. Է. Ս. Մկրտչյան, Դերբայական կապակցության և դերբայական նախադասության փոխհարաբերությունը գրաբարում, ՀՄՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», Եր., 1984, № 8:

ենթական սկիզբ է, բայց միջուկային խումբ են կազմում ստորոգյալը և ուղիղ խնդիր: Տվյալ դեպքում ամենականնավոր կառույցը պետք է լիներ *ենթական-ստորոգյալ-ուղիղ խնդիր* հերթագայությունը՝ SPO, ինչպես՝ Իսկ *թագաւորն ծաղր առնէր գրանս* կաթողիկոսին (Բուգ., 174): Սակայն եռանդամ այս կառույցին շարադասությամբ չի զիջում *ենթական-ուղիղ խնդիր-ստորոգյալ* տարբերակը՝ SOP, ինչպես՝ *Մեք գործովք գարդիւնսն կատարէար* (ՀՀ, 5 /1/, 342), մանավանդ եթե ենթական արտահայտված է դերանվամբ: Երկու տարբերակներում ուղիղ խնդիրը և ստորոգյալը կարող են ընդմիջարկվել ենթակայով. ա) SPO. ինչպես՝ Յայնմ ժամանակի *կոչէր* առ ինքն Շապուհ *արքայն* Պարսից *գրագաւորն* Հայոց գԱրշակ (Բուգ., 194), բ) OSP. ինչպես՝ *...գոր ինքն եսպան* (Բուգ., 190):

Այսպիսի կառույցներում ենթակայի քերականական դիրքը ավելի կայուն է, քան ստորոգյալինը, միայն տարբեր հեղինակների մոտ եռանդամ հարաբերությունը կարող է տարբեր լինել իբրև ոճական առանձնահատկություն: Օրինակ, Փարպեցին մախադասությունը ավելի շատ բայով է սկսում: Աստվածաշնչում շուրջ 800 ուղիղ խնդիրներից 78%-ը PO (ստորոգյալ – ուղիղ խ.) շարադասությունն ունի, 22%-ը՝ OP (ուղիղ խ. – ստորոգյալ) տարբերակը (ՍՀ, 138):

Ենթական, որպես ներգործող առարկա, պատճառական կառույցներում ավելի շատ առաջադաս դիրք ունի. ինչպես՝ Եւ (*թագաւորն* Պարսից) ետ ածել գԱրշակ *արքայ* Հայոց զառաջեւ իրով (Բուգ., 256-258): Յետոյ (*նորա*) ածելին *բազմեցուցանէին գարքայն* Արշակ (Բուգ., 260):

4. *Ներգործական կառույցի փոխակերպումը կրավորականի* առաջ է քերում քերականական և տրամաբանական միավորների նոր հարաբերություն. ենթական փոխվում է ներգործող խնդրի (որն արդեն տրամաբանական ենթակա է), ուղիղ խնդիրը վերածվում է ենթակայի: Ձևաբանական այս գործոնը առաջացնում է նոր եռանդամ (ենթակա, ստորոգյալ, ներգործող խնդ.) շարադասական հարաբերություններ:

Ներգործող խնդիրը (O₂) ասես փոխարինում է ուղիղ խնդրին, և կանոնավորապես գործառում է SPO₂ տարբերակը. ինչպես՝ *Սպարապետն* Հայոց Մանուէլ մեծաւ պարգեւօք *մեծարեցաւ ի նմանէ* (ՀՀ, III /3/, 107): Այս տարբերակում ենթական առաջադաս քերականական դիրքը պահում է քերականական հատկանշով (ընդունվում է որպես գործողություն կատարող): Բայց քանի որ այն մաս տրամաբանական ենթակա չէ, ուստի կարող է դիրքափոխվել. այդ դեպքում ներգործող խնդիրը առավելապես նախորդում է ստորոգյալին, և ձևավորվում է O₂PS (ներգ. խնդիր-ստորոգյալ-ենթակա) տարբերակը: Օրինակ՝ *Յերկրէ կերակրին* (գազանք) (Եգն., 52): Ձի *յԱստուծոյ խնդրեսցի վրէժխնդրութիւնն* (ՀՀ, 5 /1/, 166):

Այս եռաբաղադրիչ կրավորական կառույցները հանդիպում են մաս ալ տարբերակներով, այսպես՝ ա) ներգործող խնդիրն ու ստորոգյալը ընդմիջարկվում են ենթակայով (O₂SP). Ընդէր բնաւ *ի նմանէ* այնպիսի *գաւակ* անպիտան *ծնանիցի* (ՀՀ, III /3/, 105-106): *Ի նմանէ* իսկ աշխարհին Կորդուսաց *վարդապետ տուեալ էր* (անդ, 106), բ) ներգործող խնդիրը և ստորոգյալն ընդմիջարկվում են դիրքափոխվելով (PSO₂). զիարդ *սատակեցան Վահան* եւ *կինն* իւր *խորեանց որդոյն* (անդ, 388), գ) ենթական և ստորոգյալը ընդմի-

ջարկվում են ներգ. խնդրով (SO₂P). *նշանք* եւս բժշկութեան *յԱստուծոյ յաջողեալ յինէր* ի ձեռս նոցա (ՀՀ, 5 /1/, 167): *Որք ի նմանէ հանդիմանեալ յինէին* (ՀՀ, 7 /3/, 82), *դ* ենթական և ստորոգյալը ընդմիջարկվում են ներգործ. խնդրով ենթականի հետադասութեամբ (PO₂S). «*Վերացաւ ի նոցանէ տէրութիւնն*» (անդ, 85):

Այսպիսի տարբերակները հավասար հաճախականութեամբ չեն հանդիպում, բայց մի երևոյթ ընդհանրական է. ենթականի և ներգործող խնդրի հակադրությունը կարող է պատճառ դառնալ ենթականի դիրքափոխութեան (հետադասվել), ներգործող խնդրի զեղչման. ինչպէս՝ *Եւ այնպէս սատակեցաւ չարն* (ՀՀ, 7 /3/, 372), *Եւ սատակեցաւ նա եւ զօրն* (անդ), հմմտ. *սատակեցաւ ի նմանէ. ի Վասակէ* եւ *ի զօրացն* Հայոց *սատակեցաւ* (ՀՀ, III /3/, 387):

Բ. Շարահյուսական գործոններ:

Մրանք պարզ թե բարդ նախադասութեան կառույցներում հեղինակի և ուղղակի խոսքերի, գլխավոր և երկրորդական նախադասությունների կապի ու փոխհարաբերությունների պայմաններում գործառող երևոյթներ են, որոնք նպաստում են ենթականի և ստորոգյալի շարահյուսական կարգավորմանը: Գրանցից ուշադրութեան են արժանանում գլխավոր անդամների զեղչման, գլխավոր և երկրորդական նախադասությունների կապի, հեղինակային և ուղղակի խոսքերի միջև ավելադիր ասացական բայերի գործածութեան, **ենթակա-ստորոգյալ** կապակցութեան կից կամ ընդմիջարկված լինելու և այլ հարցեր: Այսպէս՝ 1. **Չեղչումը** շարահյուսական երևոյթ է, նաև՝ ոճավորման միջոց: Գրաբարում զեղչվում են նախադասութեան բոլոր միավորները, նույնիսկ նախադասությունները: Եթե պարզ ու հասկանալի են նախադասութեան կառուցվածքի, նախադասությունների փոխհարաբերութեան հարցերը, նախադասութեան անդամների տեղն ու դերը, ապա զեղչման հետ կապված հարցերը հեշտ են լուծվում:

Ենթական և ստորոգյալը զեղչվում են բոլոր տեսակի կառույցներում, և միջոցներ կան դրանք վերականգնելու, «իրենց տեղը բերելու», սակայն առանձնանում է ստորոգյալի զեղչումը երկկազմ նախադասութեան մեջ, որով կայունանում է ենթականի առաջադաս դիրքը. այսպէս՝ *Բայց մի ոմն, որ (եր) նախնի հեբրայական ազգին, ոչ ի խորհուրդն ենուտ շինել զվաղափուլն* (Ագաթ., 322): *Եւ յետ նորա Արտաշէս որդի նորա (թագաւորէ) ամս քսան եւ վեց (Խոր. ՊՀ, 103)*: Խնամակալութիւն* (հասեալ է) *յԱնահիտ տիկնոջէ* (Ագաթ., 127)*:

2. Հեղինակի և ուղղակի խոսքերի միջև (որոնք նաև գլխավոր, երկրորդական նախադասությունների դեր ունեն) գործածվում են ասացական բայեր (ասել, խօսել, պատասխանի տալ...), որոնք թեև ավելադիր են, սակայն կայունացնում են ենթականի դիրքը: Ենթական ասացական բայից առաջ է՝ **PS** տարբերակով: Այդ բայը դրվում է հեղինակային խոսքի վերջում՝ կարծես դիրքափոխված **SP** կարգը վերականգնելու համար. այսպէս՝ *Ետ պատասխանի Բարսիլիոս թագաւորին եւ ասէր* (ՀՀ, III /1/, 186): Ապա *խօսել սկսանէր եպիսկոպոսապետն Ներսէս ընդ թագաւորին*, եւ *ասէր* (անդ, 187): Ապա *խօսել սկսանէր* սուրբն *Ներսէս*, եւ *ասէր* (անդ): *Եւ ետ հրամանն Համազասպեանն վահանաւորացն, ...ասէ* (ՀՀ, III /2/, 411): Կարելի է նշել, որ

այսպիսի կառույցներում *ասել* ավելադրությունը ձեռք է բերել քերականական արժեք՝ վերականգնելով նախադասությունների քերականական կապը, որը թուլանում է հեղինակային խոսքում ենթակայի և ստորոգյալի դիրքափոխության (PS) պատճառով (ՍՀ, 177):

3. Երկրորդական նախադասության բնույթը նպաստավոր է գերադաս և ստորադաս նախադասությունների սերտացման համար, որի քերականական լուծումը կարող է կատարվել գլխավոր նախադասության ենթակայի հետադաս դիրքով՝ երկրորդական նախադասությանը մոտենալու ուղիով. ինչպես՝ *Եկին բազմութիւնք ... ճգնակիցք, որք ... ցուցանեն ճշմարտութիւն* (ՀՀ, III /3/, 227): Արդ ո՞վ էր *նա՛ որ այնչափ մեծամեծ կարաց գործել* (Եզն., 218):

Սակայն ճշմարտություն է, որ գլխավոր նախադասության մեջ տիրապետող է SP տարբերակը, մասնավորապես եթե երկրորդական նախադասությունը նախադասվում կամ միջադասվում է գլխավորին, ինչպես՝ *Անաստութիւնն եւեթ որ արտաքոյ Աստուծոյ կամացն գործիցի* պատճառ չարեաց *իմանայի է* (ՀՀ, 1, էջ 680): *Որ առ զմարմին անըմբռնելին և շօշափեցաւ և ըմբռնեցաւ* մարմնովն (Ազաթ., 210): Արդ՝ որ *այսպէս անօգուտ են եւ ոչինչ, եւ ոչ ումեք պիտանացու՝* (դուք) *հատէք խզեցէք* ի բաց *ընկեցէք* յանձանց ձերոց գոսացեալն (Ազաթ., 290): Իսկ *որք էին ի ներքս ի վանս սպարապետին*, (նորա) *յոտն կացին* (Եղ., 180): Բայց *մի ոմն, որ նախնի հերրայական ազգին, ոչ ի խորհուրդն եմուտ շինել զվաղափուլն* (Ազաթ., 322):

4. Բացահայտիչ - բացահայտյալի կապակցությունները⁶ առնչվում են ենթակայի դիրքափոխության հետ: Բուն և մասնական բացահայտիչները համաձայնում են ենթակա-բացահայտյալին, որ գործածվում է ուղղական և թեք հոլովներով՝ դրսևորելով դիրքափոխվող շարադասություն: Բացահայտյալ-ենթական ստորոգյալին շարադասվում է SP և PS տարբերակներով: Օրինակ՝ *Փառանձեմ դուստր* Անդովկայ ... ի ժամանակի անդ էր *կին* Արշակայ թագաւորին Հայոց (Բուզ., 208): Յայնժամ *գայառ* նա ազգականն իր եւ հարազատ *Կամսար*, առաջին *որդի* Պերոզամատայ (Խոր., 286): Իբրև *ետես Հիրկանոս* Հրէից *քահանայապետ* եւ *թագաւոր* (Խոր., 152):

Սեռական հոլովով՝ *Ի չափ հասեալ Արտաւազդայ որդոյ* Արտաշիսի՝ *եղև* այր քաջ (Խոր., 214): Չի այժմիկ *ձեր ծառայից* զմեր տերանց ձերոց զբարձ *կալեալ է* (Բուզ., 258):

Սեռական ենթական, անմիջաբար նախադասվելով ստորոգյալին, կարող է ընդմիջարկումով հեռանալ բացահայտչից. ինչպես՝ *Արտաւազդայ ոչ գտեալ*, ասեն, քաջի *որդոյն* Արտաշիսի, տեղեկիկ ապարանից (Խոր., 100): Լինում է և հակառակը. ձգտելով դեպի բացահայտիչը՝ հետադասվում է ստորոգյալին, ինչպես՝ *Լցցի երկիր* զհտութեամբ Տեառն *իրբև ջուրք* (ՀՀ, IV /1/, 578):

Մասնական բացահայտչով բացահայտյալ-ենթական առանձնահատուկ է նրանով, որ կարող է նախադասվել ոչ միայն ստորոգյալին (SP), այլև բացահայտչին (որպիսի կիրառություն չունի բուն բացահայտիչը): Օրինակ՝ *Մարգարէքն իրբև յուսաւորք ծագեցին* (ՀՀ, IV /1/, 578): *Մոքա իրբև*

⁶ Տե՛ս Է. Ս. Մկրտչյան, Բացահայտիչ - բացահայտյալի կապակցությունը գրաբարում, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հաս. գիտ.», Եր., 1999, № 1, էջ 98 - 107:

գառինք մատուցան ի մահ (անդ, 579): *Իբրև հովի* մի (նա) *հովուեսցէ* զխաշինս իւր (անդ, 578): *Իբրև* ի բարերարէ անտի Աստուծոյ *սերեայք* (նոքա) *բազմացան* (անդ):

Կարելի է ենթադրել, որ մանրամասն հետազոտելու դեպքում ի հայտ կգան շարահյուսական այլ գործոններ ևս, մանավանդ որ գլխավոր անդամների շարահյուսական գործածությունների դաշտը բազմազան է ու հագեցած: Նկատի ունենք նախադասության երկրորդական անդամների, միջուկային տարբեր խմբերի, ենթակայի և ստորոգյալի ընդմիջարկման, նրանց շուրջը կից կամ անջատ՝ հեռու գործածվելու հետ կապ ունեցող և այլ շարահասական նրբերանգները, որոնք խոսքը դարձնում են հարավոփոխ, նախադասության անդամները՝ ենթակա փոխդասավորության ու դիրքավորության:

II. Ենթակայի շարահասության տրամաբանական կամ ընդօժան սկզբունք:

Տրամաբանական շեշտը ենթակայի և ստորոգյալի շարահասական հարաբերություններում նրանց դիրքի փոփոխման կամ կայունացման միջոց է: Երբ ենթական կամ ստորոգյալը (երբեմն՝ ստորոգյալի մասը) իր վրա է վերցնում նախադասության հնչերանգի ամենաբարձր տոնը, ընդգծվում իմաստային լրացուցիչ բեռնվածությամբ, դառնում է հաղորդվող մտքի հիմնական միավորը (ՄՀ, 123)՝ կայուն տեղ գրավելով նախադասության սկզբում:

Այսպես՝ 1. Ենթական ընդգծվում, դիրքավորվում է նախադասության սկզբում՝ ստանալով սաստկական լրացուցիչ իմաստ ու երանգ: Սաստկական իմաստ են արտահայտում որոշ դերանուններ, եղանակավորիչ հատկանշով շաղկապներ, մակբայներ, *անձն* գոյականը և այլն: Դերանունները գործածվում են ուղիղ՝ *ինքն*, *ինքեանք*, *իւրեանք*, *նոյն*, և թեք՝ *յինքենէ*, *ինքեամք*, *ինքեանց*, *իւր*, *իւրեանց*, *ինձէն*, *քեզէն*, *մեզէն*, *ձեզէն* ձևերով: *Անձն* գոյականը սաստկական իմաստ է արտահայտում թեք ձևերով՝ *յանձնէ*, *անձամք*: Շաղկապներից և մակբայներից են՝ *իսկ*, *եւ*, *նաեւ* (*նա եւ*), *եւս*, *անգամ*, *միայն*, *եւեթ*, *ինքնին*: Սրանցից յուրաքանչյուրը, դրվելով ենթակայի վրա, նախորդելով կամ հաջորդելով սրան, սաստկացմամբ կայունացնում է նրա դիրքը: Սակայն սաստկացման երանգը դրանով չի սահմանափակվում. այն ավելի է սաստկանում III, նույնիսկ IV երանգավորող բառերով: Այդպիսով տրամաբանորեն ընդգծվող ենթական հանդես է գալիս *երկրադադրիչ*, *եռաբադադրիչ* և *քառաբադադրիչ* կառույցներում: Օրինակ՝ ա) ենթական երկբադադրիչ է. *Ինքն իսկ* յանձն իւր կրթէր (ՀՀ, 5 /1/, 558): *Ինքն իւր* չար է (անդ, 557): *Ինքն յինքենէ* ունի զհաստատութիւն (անդ, 537): *Ինքն ինքեամք* մշտնջենաւոր է (անդ): *Տէր ինքնին* ասէ (անդ): Դու *ինքնին* քաջ գիտես (անդ, 285): Դու *անգամ* մի հրովարտակ ի դուռն տար վասն այրիձիոյն (անդ): Յորում եւ *դուք* էք բնակեալ այժմ (անդ, 286): Չնոյն եւ *դուք* կալարուք (անդ): Դուք եւս *ընդէ՞ր* զհետ նոցա մոլորութեանն ցնորիք (անդ): *Ինքն յանձնէ* իմաստութիւն ինչ այնպիսի ոչ ունէր (ՀՀ, 1, էջ 398): Չոր *ինքեանք իսկ* վկայեն (անդ, 398): *Իւրեանք ինքեանք* չեն, քանզի ոչ գիտեն՝ թէ իցեն եւ թէ չիցեն (անդ, 397): *Իւրեանց ինքեանք* չեն... (անդ): Անմահ բնութեամբ՝ *Աստուածութիւնն եւեթ* է (անդ, 275): *Լաւք եւեթ* երեւեսցին (անդ): *Յոյնք ինքեանք* ի Քաղղեացոցն փոխեսցին յիւրեանց լեզուն (ՀՀ, 7 /1/, 558): *Մեք մե-*

զէն ողջ ենք դիցն օգնականութեամբ (Եղ., 18):

Հետաքրքրական է, որ երկբարդադրիչ կառույցում ենթական գեղջվելու դեպքում սաստկական իմաստ արտահայտող թեք հոլովով դերանունը մնում է կենտ՝ ասես փոխարինելով ենթակային: Այդ պատճառով թուլանում է ենթակայի դիրքը, և ակտիվանում է ստորոգյալը ու տեղափոխվում առաջ, ինչպես՝ Եւ *անցես քեզէն* զձեռանէ արքային Հայոց Արշակայ (Բուգ., 256) (փոխ. *դու քեզէն անցես...*): Եւ շաղկապի սպասարկու կիրառության դեպքում երբեմն ստորոգյալը առաջադաս է գործածվում. *Երկնէր և ծովն* ծիրանի (Խոր., 102):

բ) Ենթական եռարդադրիչ է. *Ինքն իսկ մոզպետն* իշխան էր աշխարհին (ՀՀ, 5 /1/, 536): *Ես ինքն իսկ* եմ (անդ): *Գուք ձեզէն իսկ* քաջ գիտէք (անդ, 286): *Ես ինքնին անձամբ* պատահեցի եւ տեսի (անդ, 537):

գ) Ենթական քառարդադրիչ է. *Չոր և դուք ինքնին իսկ* գիտէք (անդ, 286): *Նոյն ինքն տէր Քրիստոս* (ՀՀ, III /3/, 142):

2. Որոշ եղանակավորիչ շաղկապներ, ի տարբերություն ենթակայի իմաստը սաստկացնողների, ընդգծում են նախադասության սկզբի ենթական՝ այն առանձնացնելով ստորոգյալից կամ մյուս անդամներից: Այդ շաղկապներից են՝ *քէ, եքէ, բայց եքէ, ուրեմն, քէպէտ, քէպէտ և, զի քէպէտ* եւ: Օրինակ՝ *Աղբատքն բայց եքէ* ի մոյր ելցեն (ՀՀ, III /1/, 405): Իսկ *քազատորն* Հայոց Պապ *զի քէպէտ և* սպան զհայրապետն (անդ, 639): Իսկ Արշակ *արքայ քէպէտ* պատերազմ կամէր տալ (անդ., 633): Արդ *Չրուանն եքէ* արջատ էր (ՀՀ, 1, էջ 210): *Արեգակն քէ* բարի է (անդ, 335): Բուն *քանակն ուրեմն* քազատորին ի Թարեշն բնակեալ էին (ՀՀ, III /3/, 234):

3. Հաճախ հեղինակի խոսքը, որ արտահայտվում է *ասել* բայով (ասէ, ասէր, ասեն), միջանկյալ կիրառությամբ առաջ է բերում առաջադաս ենթակայի ընդգծում և առանձնացում. ինչպես՝ Սոյնպէս եւ մեծն *Պօղոս, ասէր*, պատմէ՝ թէ (ՀՀ, III /1/, 186): Բայց *ես, ասէ*, ետեղապահ եմ (անդ, 183): Նախ *դու, ասէ*, դարձուցես զգերութիւն առեալ յերկրէն Հայոց (անդ): *Մէք, ասեն*, չենք բաւական մերձենալ (ՀՀ, 1, էջ 81): *Լուսին, ասեն*, ի ներքոյ է քան զարեգակն (Եզն., 164):

4. Գրաբարում կա բարդ նախադասության մի տեսակ, որն արդյունք է տրամաբանական շեշտի ուժգնությամբ ենթակայի՝ ստորոգյալից հեռացման, առանձնացման: Փաստորեն պարզ նախադասության ենթական առանձնանում է և էական բայի հետ կազմում նախադաս՝ գերադաս նախադասություն, ստորոգյալը մնում է իր տեղում: Այսպես՝ Եւ ոչ *ոք* էր՝ որ մնացեալ էր առ թազատորին (ՀՀ, III /3/, 206): *Մեծատունն* էր՝ որ զամենայն պատուիրանսն կատարեալ էր (անդ, 208): Իսկ *ն՞իցէ*, որ սիրեաց զհիւանդութիւնն եւ ատեաց զառողջութիւնն (անդ, 209): Այն *նոյն* է՝ որ էրն է, կայ եւ մնայ յաւիտեան (Ազաթ., 54): ...թէ *Վարդան* է, որ մատնէ զքեզ թազատորին Պարսից (ՀՀ, III /3/, 476): *Բազումք* էին, որ յայտ արարին զչարիս նորա (Եղ., 268):

III. Ստորոգյալի շարադասության տրամաբանական կամ ընդգրծման սկզբունք:

Ենթական և ստորոգյալը որքան հավասարաժեք են իբրև կառուցվածքային և ստորոգումային հիմքի միջուկներ, այնքան տարբեր են շարա-

դասության պայմաններում տրամաբանական շեշտի, ընդգծման ու առանձնացման հատկանիշներով: Բանն այն է, որ հավասարապես մեկի շեշտումով, ընդգծումով մյուսի դիրքերը «չեզոքանում, թուլանում են»⁷, այսինքն՝ կշեռքի նժարների պես մեկի բարձրացումով մյուսն իջնում է: Ուրեմն տրամաբանական է նկատել, որ եթե ենթակայի առաջադաս դիրքերն ամրանում են տրամաբանական շեշտով, ընդգծումով ու առանձնացումով, ստորոգյալի դիրքերը չեզոքանում, թուլանում են, հետևապես *երբ ստորոգյալն է շեշտվում, ընդգծվում կամ պարտադրվում և առաջադաս դիրքում կայունանում, ապա ենթակայի դիրքերն են չեզոքանում կամ թուլանում*:

Այսպես՝ 1. Գործողության ընդգծումով ստորոգյալը առաջադաս դիրք է զբաղեցնում՝ անկախ կազմությունից և արտահայտությունից: Օրինակ՝ *Առին նորա* հրաման ի Տեառնէ (Ագաթ., 334): *Ջրուցէ* մեզ զայս *Բարդաժան* (Խոր., 242): Եւ *են ցաւք*՝ որ ոչ վասն մեղաց են (ՀՀ, 1, էջ 228): Ձի *չէր* ինչ մեծ *գործ* Աստուծոյ (անդ, 226): Յորժամ իցէ որ (անդ, 223): Եթէ *դորա են ծառայք* Աստուծոյ (անդ, 229):

Հարցական և հրամայական կառույցներում նույնպես հանդիպում են ստորոգյալի այսպիսի առաջադաս կիրառություններ: Օրինակ՝ Ձի՞նչ ինչ վնաս *գործեալ է իմ* (Եղ., 166): *Ուստի՞ է խաւար, ուստի՞ են չարիք* (ՀՀ, 1, էջ 223): *Մարմնատ՞րք էին* արդեք *դիրքն* (անդ, 230): *Ուրախ յերուք ամենեքեանի* Զրիստոս (Եղ., 310): *Նստարուք դուք* (Ծննդ., ԻԲ, 238): *Կալարուք դուք* զիրաքանչիւր տեղի (ՀՀ, 5 /1/, 303): *Ո՞ր է Սարրա* կին քո (անդ, ԺԸ, 220): Միթէ *տկարանայցէ՞* առ ի յԱստուծոյ *բան* (անդ):

Սա տարբեր աղբյուրներում հատուկ ոճի է վերածվում: Օրինակ՝ Աստվածաշնչում առաջադաս ստորոգյալները անսահման իշխող են. այսպես՝ Եւ *յարեաւ* Աբրահամ...գոր *ասաց* նմա Աստուած...համբարձ Աբրահամ զաչս իւր ... Եւ *ասէ* Աբրահամ. *նստարուք* դուք ... Եւ *առ* Աբրահամ զփայտ ողջակիզին (Ծննդ., ԻԲ, 238): Փարպեցին սկսում է անցյալ դերբայով, որ ունի սեռական ենթակա. այսպես՝ Եւ *զնացեալ* ի բաց ի տեղուջէն *Վեհդենչապիոյ* (ԳՓ, 244): Եւ *մնացեալ* անդ *պահապանացն* (անդ): Եւ *մտեալ* *թագաւորին* Հազկերտի (անդ, 252): Եւ *կեցեալ* Յազկերտի *թագաւորին* Պարսից (անդ, 258): Եւ *լուեալ* *նախարարացն* Հայոց զայս (անդ, 260): Եւ *լուեալ* զանուն մահուան Մամիկոնէին *Վահանայ* (անդ, 290) ևն:

2. Նախադաս ստորոգյալի գործողության ընդգծվածությունը, որ մոտենում է սաստկացման, դրսևորվում է հոմանիշ բայերով, որոնք կարող են լինել անդեմ և դիմավոր ձևերով: Օրինակ՝ Ապա *կազմէր պատրաստէր* Վասակ *գորավարն* Հայոց (ՀՀ, III /2/, 228): Ապա *կարգէր կազմէր պատրաստէր* Վասակ *գորավարն* Հայոց (անդ): Եւ *հանդերձեաց կազմեաց* թագաւորն Յունաց (անդ): *Փոշտեցան* եւ *ծխտեցան սրահակք* եւ *սրսկապանք* նորեկ հարսանց...տապալեալ *աւերեցան ամուրք* ապաստանի նոցա, *անկան կործանեցան ապարանքն* նոցա (Եղ., 404): *Խցեալ կուրացան արշաւանք* բարակաց (Եղ., 408): *Մատակելով սատակիցի՞մ* եւ *ես եւ տուն* իմ (Ծննդ., ԼԳ, 308): *Դողացեալ սարսեալ կայր* Միհրան զնդան (ԳՓ, 330):

3. Ստորոգյալի առաջադաս դիրքն ընդգծվում և ապահովվում է իմաստը սաստկացնող եղանակավորիչ շաղկապներով: Օրինակ՝ *Վասն մեղաց*

⁷ Հմմտ. Ս. Հայրապետյան, նշվ. աշխ., էջք 86 – 88, 94 – 131:

խկ լինին այսպիսի *տանջանք* (ՀՀ, 1, էջ 228): *Թէ ոչ մահկանացու իսկ էր, մարմին* (անդ): *Թէպէտ եւ էարկի* նուսա *թագաւորն* զձեռն իւր (ՀՀ, 5 /1/, 380): *Բայց թէպէտ եւ զիսէին նոքա* զդառնութիւն տերութեանն (անդ, 381): *Չի թէպէտ եւ փոխեցաւ նա* (անդ): *Թէպէտ եւ քօթափեցան* եւ *ցրուցան զօրքն* իւր ի նմանէ (անդ): *Չարագոյն եւս երեւի անօրէնութիւնն* Վասակայ (անդ, 386): *Չարագոյն եւս լինելոց է կատարածն* (անդ): *Յանդգնեցան եւ եւս կանայք* (անդ):

4. Առհասարակ գրաբարում շատ են ստորոգյալի դիրքը կայունացնող բառերն ու արտահայտությունները. դրանք մակբայներ են, շաղկապներ, եղանակավորող բառեր և նրանցով կազմված կառույցներ, որոնք ստորոգյալի արտահայտած իմաստն ընդգծում են, տեսանելի դարձնում և մղում առաջնային պլան: Այդպիսի բառեր ու կապակցություններ են՝ *ահա, ապա, եթէ, իբրև, յորժամ, եւ ահա, ապա իբրև, եւ եղև, իբրև եղև, եւ եղև իբրև* և այլն: Օրինակ՝ *Ահա շրջեցան* զինեւ *շունք* բազումք (ՀՀ, 5 /1/, 9): *Ահա մոռացեալ իցէ մեր* զամենայն նեղութիւնս (անդ): *Եւ ահա եկն լեհաս ժամանակ* (անդ): *Եւ եթէ գտեալ էր նորա* (անդ, 303): *Եթէ կայցէ՞ինչ զանձ* ի գերեզմանս մերոց (անդ): *Յորժամ եկեսցէ Հոգին* ճշմարտութեան (անդ, 193): *Յորժամ արար Աստուած* զարարածս (անդ): *Ապա իբրև* զայն *յսէր զօրավարն* Հայոց (ՀՀ, III /1/, 134): *Եւ եղև իբրև ծնաւ* զնա *մայրն* իւր (անդ, 73) և այլն:

Հարցական – ժխտական կառույցներում ենթական և ստորոգյալը կարող են փոխդասավորվել՝ ենթական առաջադասվում է. ինչպես՝ *Ո՞չ ահա* բազում *ուամունք են* աշխարհիս Արեաց (ՀՀ, 5 /1/, 9): *Ո՞չ ահա ձեր իսկ* յառաջագոյն *յուեալ էր* (անդ):

Այսպիսով՝ ենթակայի և ստորոգյալի առանձնահատկությունները գրաբարում բացահայտվում են քերականական՝ ձևաբանական և շարահյուսական ու տրամաբանական կամ ընդգծման սկզբունքների գործադրմամբ: Այդ առանձնահատկությունները լեզվի օրինաչափ զարգացման արդյունք են, միաժամանակ՝ հեղինակային ոճի դրսևորումներ:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ագաթ. - Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Եր., 1983:
 Բուգ. – Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Եր., 1987:
 Եզն. - Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Եր., 1994:
 Եղ. - Եղիշէ, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Եր., 1989:
 Խոր. – Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Եր., 1981:
 Կոր. – Կորին, Պատմութիւն վարուց և մահուան սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի, Թիֆլիզ, 1913:
 ՂՓ – Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Եր., 1982:
 ՀՀ – Հայկական համալսարան (1-12՝ Եզնիկ, Ագաթանգեղոս, Բուզանդ, Փարպեցի, Եղիշէ, Խորենացի...):
 ՍՀ – Մերգո Հայրապետյան, Ենթակայի, ստորոգյալի և ուղիղ խնդրի շարադասությունը գրաբարում («Հայոց լեզվի պատմության հարցեր», № 2, Եր., 1985):

Э. С. МКРТЧЯН — *Расстановка подлежащего и сказуемого в древнеармянском языке (грабаре)*. — Автор статьи рассматривает главные вопросы расстановки подлежащего и сказуемого, принимая за основу известные принципы лингвистики.

Морфологические факторы (выражение подлежащего в различных частях речи и падежах, проявления переходности глаголов и трансформации).

Синтаксические факторы (эллипсис, функция глаголов речи, употребляемых между речью автора и прямой речью, типы второстепенных предложений, сочетание приложения с его определяемым).

Особенности логической или подчеркнутой расстановки подлежащего и сказуемого.